չինուած է Բանակի զօրքի Պաշտպանի պատուին։ Սրանք երեւի բանակի կենդրոնատեղերն են եղել, նրանց շուկաները։ Այս բանակը պաշտպանել է Հայաստանը հիւսիսարեւմտեան կողմից անակնկալ թշնամիների յարձակումներից։

Փենեքի ջուրը Օլթի վտակին խառնուելուց յետոյ, ընդունում է աջից՝ Փալգաս, Կորան, Էյրի-Քիլիսէ[1] եւ Մարմաշ առ-ը,

---

[1] Էյրի-Քիլիսէ. Խալական Փիգայի նման, Պահլաւունիներն էլ իրը թէ Թէք տաճար (Քիլիսա) են ունեցել։ Տաճարը կործանուած է, աւերակները չեն վերակազմուած. բայց ես կարծում եմ, որ այստեղ Էյրի չպէտք է թէք հասկանալ. այլ թէքուած եկեղեցի։ Երբ հայ ժողովուրդն ու հոգեւորականութիւնն ազատուեցան Պարթեւ-Պահլաւ եպիսկոպոսապետներից եւ կաթուղիկոսի ընտրութիւնը ժառանգականից՝ հասարակական ընտրութեան անցաւ, երբ ժողովուրդը Պահլաւունիների փոխարէն ամէն դասից էլ ընտրեց կաթուղիկոս, պահլաւունիները դաղտի կաթոռ կազմեցին եւ իրենց հետեւորդներն էլ ունեցան։ Այնինչ երբ Ինիում խաչատուրը, ապա Պետրոս Գետադարձը կաթողիկոս էին եւ ամբողջ եկեղեցական իշխանութիւնն ու կալուածները նրանց ձեռքին էին, նոյն Բագրատունիների Ինի մայրաքաղաքում նստում էր Պահլաւունի Սարգիս եպիսկոպոսը, որը իր տոհմականութիւնական տաճարն ունէր, չէր ենթարկւում ընտրովի կաթողիկոսին, այլ դաղտագողի քարոզում էր, թէ նախասահմանութեամբ իրենց տոհմին էր ընտրուած կաթողիկոսական գահը։ Վերին շնչը միայն իրենք իրաւունք ունէին սփռելու հայ ազգի վրայ։ Միայն պահլաւունները մարդկութեան ստեղծագործութիւնից առաջ ստեղծուած եւ նախասահմանուած էին հովանել Հայ ժողովուրդը, «Հրաշափառ Աստուած եւ միշտ քարեխնամող, որ յառաջ գիտութեամբ ...» շարականը միայն Պահլաւունիների համար է գրուած։

Պահլաւունիները Շիա Սէիդների նման պահան-